և այսպէսի մեծ զօնզուլացիայով ուրախացուց զմեզ։ Վերջապէս ասաց հայր ղազարին թէ՝ վասըն իմ այսինքն Գերապայծար եպիսկոպոսին սէպըն աղօթք ունին նայև սուրբ Պատարագ մատուցանեն...։

Կու մնամ
Նուաստ ծառայ
Օվանէս Ոսգէրիչեան

ՃԿԶ.

Մինասայ Էջմիածնի կաթողիկոսութեան վերջին տարուոյն մէջն ենք։ Նշանակուած դէպքերու այս մանրամասնութիւնը կը պակսի Զամչեանի Պատմութեան մէջ։

Ի

Գերապատիւ և Գերյարգոյ՝ գերյարգելի Տեառն Տեառն Ստեփաննոսի Աստուածաբանուրեան վարդապետի և Արբայի միաբանիցն Հայոց՝ ողջոյն կարօտանաց

... ի յԷջմիածնէ եկն գիր առ աղէքսանդր և առ ահագին սահակ և առ գէորգ վարդապետսն՝ չու առնել խաղալ գնալ ի յԷջմիածին. քանզի նամակ կաթողիկոսական այսպէս էր գրեալ. զձեզ յորդորեմ և հրամայեմ գալ ի սուրբ աթոռն. և եթէ պատճառս յոգեսջիք այլազգս՝ լուծեալ էք ի կարգէ ձերմէ, և արգելեալ յամենայն եկեղեցական գործոց։ Սոքա արք արգոյք ի մէջ ազգին հայոց (որոց յոյսն էր միշտ ի կոստանդնուպօլիս մնալ, մանաւանդ նենգաժոտ զէորգն՝ որ զպատրիարքութիւնն կրկին կամէր առ ինքն ձգել), տեսեալ զայս նամակ խռովեցան յոյժ. և ի սիրտ և յոգի անհնարին վիրաւորեցան։ Հնարս խնդրեցին ազատել զանձինս՝ ի պարտուց աստի յայսցանէ. և չեղև հնար. քանզի սարաֆքն միաբերան և ասեն՝ ոչ գոյ հնար. պարտ և պատշաճ է ձեզ զհրաման հայրապետին կատարել, ապա թէ ոչ ընդ բանիւ էք. և մեք ընդ ձեզ խօսիլ խղճամբ։ Եւ նոքա ետուն պատասխանի, յետ զատկին կատարել զհրաման Հայրապետին։... Անտանելի տառապանօք հագիւ կարացին զգէորգն վասն այժմոյս ի պուռսա յղել...։

Գրեցաւ ի Կոստանդնուպօլիս
յամի տեառն 1753 ի ապրիլի 14

Նուաստ չնչին
Աթանաս Վարդապետ

ՃԿԷ.

Ամբողջացնելու համար Պաշֆալովի Մխ. Առաքելութեան նախապատրաստական շրջանի տեղեկութիւնները՝ կը հրատարակենք հոս հետևեալ նամակը։

Գերապատիւ և Գերյարգոյ Տեառն իմոյ Ստեփաննոս վրդպի. և Արբահօրն իմոյ

... յաւուրս այսոսիկ գնացաք ընդ փլէպանուշին և ընդ Աղայ յոհաննիսին մինչև ի Պէլիկրատն, և ընկալաւ զմեզ սիրով Եպիսկոպոսն, և ասաց թէ ընդունիմ զայս կրօնս և կամիմ ես զի ի կեղայ ես մտանիցէք. զգիրն քաղաքին զոր առեալ էի սիրով ընթերցաւ եպիսկոպոսն։ Խոստացաւ տալ զգիր հաստատութեան կրօնին մերոյ երկրիս յայսմիկ և փութով ոչ կարաց, քանզի պիտոյ էր գրել ի վերայ մագաղաթի վասն ապագային։ Կարծեմ թէ մինչև ցայժմ պատրաստ է։ Աղայ յոհաննէսին յանձնեցի հոգալ։